

**«ԱՐՈՐ» ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԸ
(1910—1912 թթ., Թիֆլիս)**

Ս. Ս. ՆԱԶԱՐԵԱՆ

Պատմական յուրաքանչյուր ժամանակահատվածում հայ պարբերական մամուլն ունեցել է իր առաջընթաց զարգացումը: 20-րդ դարի առաջին երկու տասնամյակներում արևելահայ մամուլի անդաստանը հարստացել է ոչ միայն հասարակական-քաղաքական զանազան ուղղություններ ունեցող, այլ նաև գիտության ու արվեստի տարբեր ճյուղերին նվիրված մասնագիտական պարբերականներով («Բանբեր գրականության և արվեստի», 1908—1904, Պետերբուրգ, «Նոր դպրոց», 1908—1913, Թիֆլիս, «Գեղարվեստ», 1908—1921, Թիֆլիս, «Հուշարար», 1907—1913, Թիֆլիս, «Թատրոն և երաժշտություն», 1910—1917, Բաքու, «Գյուղատնտես», 1909—1917, Թիֆլիս և այլն):

Թվարկված պարբերականների շարքում իր առանձին տեղն է գրավում ժամանակին հայտնի հրապարակախոս, գրող, խմբագիր, հասարակական գործիչ Համբարձում Առաքելյանի՝ «Արոր» գիտության, գրականության, քաղաքատնտեսության, գեղարվեստի, խաղաղասիրության, արևելագիտության, հայագիտության և կովկասագիտության միամսյա հանդեսը:

1910 թվականին Թիֆլիսում ձեռնարկելով «Արոր» պատմագիտական հանդեսի հրատարակության գործը, Հ. Առաքելյանը հետապնդել է մի գլխավոր նպատակ՝ հայ մտավորականության ուշադրությունը դարձնել գիտության ու մշակույթի այն ճյուղերի ուսումնա-

1 Համբարձում Առաքելյանը ծնվել է 1855 թ., Ծուշի քաղաքում: Ակզբնական կրթությունն ստացել է հայրենի քաղաքում, այնուհետև ուսումը շարունակել է Թավրիզում: 1879 թ. ավարտել է հաքվի ռեալական ուսումնարանը: Սովորել է Մոսկվայի Պետրովսկու անվան գյուղատնտեսական ակադեմիայում: Եղել է Ծուշի քաղաքի թեմական դպրոցի տեսուչը: 1881 թ. Ծուշիում հիմնադրել է Կովկասի Հայոց բարեգործական ընկերության առաջին մասնաճյուղը:

Հ. Առաքելյանը հրապարակախոսական գործունեությունն սկսել է 1872 թ., որպես «Մշակի» թղթակից: 1908 թ.-ից նա դարձել է թերթի խմբագիրներից մեկը, իսկ 1913 թ.-ից մինչև իր կյանքի վերջը՝ թերթի հրատարակիչն ու խմբագիրը: 1904 թ. Հ. Առաքելյանը մասնակցել է Հաագայի խաղաղության միջազգային կոնգրեսին՝ Հայկական հարցը դիվանագիտական շրջանակների ուշադրությանը ներկայացնելու առաքելությամբ: 1906 թ. եղել է Առաջին, իսկ 1907 թ. Երկրորդ պետական դումաների ընտրող՝ կադետական կուսակցությունից: Նա սկզբում ներգրավված է եղել ազգային նարոդնիկական խմբակի մեջ, արքային և սահմանադրական-դեմոկրատական կուսակցության շարքերը: Նա Պարսկաստանում հիմնել է առաջին հայկական խաղաղասիրական ընկերությունը («Պարսկահայերի ընկերություն խաղաղության և իրավարարության»): Հ. Առաքելյանը 1915 թ. կազմել և գլխավորել է հայ գաղթականների ու օգնող հանձնաժողովը: 1917 թ. հիմնադրել է «Հայ ազգաբնակչության մեջ գրագիտություն տարածելու ընկերություն»:

1917 թ. կազմակերպել է Հայ ժողովրդական կուսակցությունը:

Հ. Առաքելյանը գրել է նաև գրական-գեղարվեստական գործեր Ծահրիար կեղծանունով: Կատարել է նաև թարգմանություններ: Թիֆլիսում 1892 թ. հրատարակել է Լամարթիմի «Վիճելմ Թելլ»-ը, 1897-ին՝ Մոպսսանի «Քսան վեպիկներ և գրույցներ» ժողովածուն, 1900 թ.՝ Ֆյամարիոնի «Ուրանիա» վեպը և այլն:

Նա կազմել է նաև քառարաններ: 1915 թ. հրատարակել է «Հանրագիտական քառարան», որ ընդգրկված են օտարազգի նշանավոր մարդկանց կենսագրականներն ու Հայաստանի տեղագրության, պատմության վերաբերյալ կարևոր նյութեր: Միաժամանակ եղել է ռուսական և միջազգային գիտական ընկերությունների անդամ:

1918 թ., երբ ժողովմուսվեստի 1917 թ. նոյեմբերի 28-ի դեկրետով կադետները համարվեցին ժողովրդի թշնամիներ, չարանեցի գնդակով զոհվեց և Հ. Առաքելյանը:

սիրությանը, որոնք անհրաժեշտ են քաղաքակրթող ժողովրդի մտավոր, հոգևոր ուժերի զարգացման և խաղաղասիրական ձգտումների համախմբման համար: «Արորը»,— գրված է այնտեղ,— աշխատելու է իր կողմից ևս նպաստել հայ մտավոր աշխարհի մեծ շենքի կառուցմանը, գործ դնելով այլ աշխատողների հետ և իր համեստ ուժերը, տալով հայ հասարակությանը ընթերցանության և առողջ սնունդ. նպաստելով նրա մտավոր հորիզոնի ընդլայնմանը՝ հայ գրականության և բանասիրության մշակմանը»: Խմբագիրը խոստանում է ամսագրի միջոցով հայ ժողովրդին լսելի դարձնել բոլոր առաջադիմական բանակների ու հոսանքների ներկայացուցիչների ձայնը, որոնք հանդես կգան ի նպաստ ժողովրդի կուլտուրական զարգացման և սոցիալական արդարության: Միաժամանակ հայտարարում է, որ հետևելու է համաշխարհային խաղաղասիրական շարժմանը, շարժում, «որի նպատակն է համամարդկային եղբայրակցությունը ժողովուրդների մեջ և փոքր ազգությունների խաղաղ, կուլտուրական, ինքնուրույն զարգացման ապահովումը, մի շարժում, որը հայտնի է խաղաղասիրություն (պացիֆիզմ) անունով և որին այսօր հարել են եվրոպական մտքի և գիտության ստաջնակարգ ուժերը» (ն. տ.):

«Արոր» ամսագրի մյուս կարևոր խնդիրն է եղել՝ շարունակել իր նախորդների, հատկապես «Փորձ», «Մուրճ» և այլ ամսագրերի ավանդույթները, ապարտեզ տալ և խրախուսել գիտության ու գրականության բնագավառներում աչքի ընկած շնորհալի երիտասարդների:

Պատմագիտական նոր ամսագրի շուրջ էին համախմբվել գրականության, գիտության արվեստի առաջադեմ ներկայացուցիչներ Ստ. Մալխասյանը, Իս. Հարությունյանը, Խ. Սամվելյանը, Աջ. Աթանասյանը, Ա. Սարուխանյանը (Սարուխան), Գ. Բաշինջաղյանը, Հ. Սուրխաթյանը, Ռ. Խանազատյանը (Խան-Ազատ) և ուրիշներ:

Նյութերը տեղաբաշխված են հետևյալ բաժիններում. «Գրական-գեղարվեստական», «Գրախոսություն», «Հայկական կյանք», «Ռուսական կյանք», «Արտասահմանյան կյանք», «Մատենագրություն», «Արևելագիտություն», «Կովկասագիտություն», «Հնագիտություն», «Գիտական, գրական, թատերական քրոնիկոն»:

Ամսագրում առանձին տեղ են գրավում Հ. Առաքելյանի (Ծահրիար), Ա. Արփիարյանի, Մ. Չերազի, Գ. Բաշինջաղյանի, Լ. Աթաբեկյանի, Հ. Սողվյանի, Մ. Բեջանյանի, Լ. Մանվելյանի և մյուսների արձակ, չափածո և դրամատիկական գործերը: Հ. Առաքելյանի «Բողոքան բեկը», «Տանջվածը» և այլ պատմվածքներ միաժամանակ ունեն հրապարակախոսական բնույթ և վերաբերում են հայ ժողովրդի սոցիալական ու քաղաքական անազատ կյանքին, ազգային-սպառնալից պայքարին, հեղափոխական տրամադրություններին: «Բողոքան բեկը» պատմվածքում ծրագրեր են առաջադրվում աշխատավոր գյուղացու սոցիալտնտեսական իրավիճակը բարեփոխելու վերաբերյալ: Այն միտքն է զարգացվում, թե հողը անվերադարձ պետք է տրվի հողը մշակողին՝ գյուղացուն: Իսկ «Տանջվածը» (հեղափոխականի կյանքից) պատմվածքների շարքում՝ գրված ռուս և հայ ուսանողների միջև եղած երկխոսության ձևով, հայ ժողովրդի ազատագրական պայքարի կետ նպատակը համարվում է Թուրքահայաստանի ազատագրումը և այսպե՛ս նոր սոցիալիստական գաղափարների իրագործման համար պայքարի ծավալումը:

Արևմտյան Հայաստանում տառապող հայրենակիցների կյանքն ու ողբը իրենց գեղարվեստական արտացոլումն են գտել «Քեթի խանը», «Սովը», «Հովոցի Եղոն», «Ռորիշ ճար չլա», «Հրեշտակը», «Պրիստավը» և այլ պատմվածքներում:

Ամսագրի գրական-գեղարվեստական գործերի հիմնական թեման վերցված է արևմտահայ կյանքից: Գողտրիկ պատմվածքներն ու վեպերը, որոնց հեղինակները մնայուն հետք էն թողել հայ գրականության պատմության մեջ, գեղարվեստական խոսքի միջոցով ընթերցողին ծանոթացրել են հայ գաղթականների ծանր առօրյային, օտար և ազգային հարջստահարիչների անմարդկային արարքներին («Մտատանջությունը», «Փաստաբանի մոտ» և այլն):

Անհրաժեշտ է նշել, որ շնորհիվ ամսագրի կորստից փրկվել են հայ բանաստեղծներից մի քանիսի ձեռագիր գործերը: Ամսագրում տպագրվել են Գ. Դողդիայանի բանաստեղծությունների ձեռագրերը («Նուշկիկն» և այլն): Այստեղ են առաջին անգամ տպագրվել նաև Պետրոս Ադամյանի գողտրիկ ոտանավորները («Առ օր. Սիրանուշին», «Առ սրտակից բարեկամն իմ» և այլն):

Հարուստ են ամսագրի գեղարվեստական գրականության թարգմանական էջերը: Ռուս գրողներից ամսագրում տպագրվել են Պուշկինի («Իմ տապանագիրը», «Ջգվելի է ու գարշելի ամեն բան» և այլն), Լերմոնտովի («Փախստական»), Գորկու («Վալախական լեզեն-

² «Արոր», 1910, № 1, էջ 2: Այսուհետև շարադրանքում փակագծերի մեջ՝ տարին, թիվը, էջահամարը:

դաս»), Լև Տոլստոյի («Խոստովանություն», «Կանաչ ձողիկ»), Չեխովի («Առանց վերահագրի»), Վս. Նեմիրովիչ-Նանչենկոյի («Մեծ սիրտը») և մյուսների գործերը:

Գրաքննադատներ Շ. Սուրխաթյանը, Խ. Սամվելյանը և ուրիշներ հանդես են եկել ռուս գրողների և տրված իրենց գնահատականներով: Շ. Սուրխաթյանը հողվածներ է տպագրել Գեորգենի, Լև Տոլստոյի մասին: Նրա թարգմանությանը և առաջաբանով ամսագրում տպագրվել է Լև Տոլստոյի «Խոստովանություն» վեպը (1911, № 1, էջ 99—114): Ամսագրում թեև նկատվել է, որ Տոլստոյը՝ «իրականության սլյանդակ կերպարանքի բուծումը» կրոնական դավանանքի մեջ է փորձել գտնել, այնուհանդերձ գրողը մեծ է համարվել «սոցիալական արդարության ջերմագին քարոզով, ճշմարտության անընդհատ որոնումով, մաքուր ու անկեղծ եղբայրասիրության, հավասարության դավանանքներով, համամարդկային խղճմտանքի մարմնացման իր վեհ պատկերով» (ն. տ., էջ 114):

Ամսագրի 1910 թ. № 11-ը գրեթե ամբողջովին նվիրված է Տոլստոյի հիշատակին: Տպագրվել են Տոլստոյի հասցեին Ան. Ֆրանսի, Շ. Հաուպտմանի, Ժյուլ Կլարեսի, Ֆր. Նանսենի և մյուսների գնահատականները:

Ուշագրավ տեղ է հատկացվել արևմտաեվրոպական գրողների ստեղծագործությունների: Թարգմանաբար տպագրվել են հանրաճանաչ գրողներ Էմիլ Զոլայի («Արյուն»), Մոպասանի («Ննջեցյալը»), Մարկ Տվենի («Երգիծական գրույցներ»), Օսկար Ուայլդի («Վարդն ու սոխակը»), Հայնեի («Հրածեշտի ժամանակ», «Երագիս մեջ լալիս էի...»), Ծարլ Բողդերի («Ով ազատ մարդ...») և մյուսների արձակ ու չափածո գործերը: Դրանցում գովերգվել են ազատության, հավերժական սիրո, մարդկայնության, ժողովրդասիրության, խաղաղասիրության, մարդասիրության գաղափարները:

Մեծ է հատկապես ամսագրի պատմագիտական արժեքը: Այստեղ տպագրվել են տեղեկություններով հարուստ նյութեր ռուսահայ գաղութների, հայ, ռուս և արևմտաեվրոպական հասարակական-քաղաքական գործիչների, խմբագիրների, գիտնականների, ինչպես նաև պատմական կարևոր իրադարձությունների, հնագիտական, կովկասագիտական հետազոտությունների և այլնի մասին:

Այսօր ևս հետաքրքրություն են ներկայացնում համառոտ տեսությունները այն տպագիր և ձեռագիր աշխատությունների վերաբերյալ, որ գրել են օտար գիտնականները, ճանապարհորդները հայերի և Հայաստանի մասին: Այսպես, 1910 թվականի համարներում գետեղվել է գերմանացի գիտնական Լեման Հաուպտի «Հայաստանն իստոյ և հիմս» Իս. Հարությունյանի թարգմանությամբ հայերեն լույս տեսած աշխատության գրախոսականը:

Ամսագրում պարբերաբար տեղեկություններ են հաղորդվել Անի քաղաքում պրոֆեսոր Մատի կատարած պեղումների և ընդհանրապես հնագետի գործունեության մասին: Պատմագիտական արժեքավոր աղբյուր է ներկայացնում պատմաբան, հասարակական գործիչ Ա. Սարոխանյանի (Սարոխան) «Օսմանյան հայերի սահմանադրությունը» աշխատությունը, որը շարունակաբար տպագրվել է ամսագրի 1910 թվականի համարներում: Այն պատմական է հարուստ նյութ հայ ժողովրդի արևմտյան հատվածի կենցաղի, սոցիալ-տնտեսական իրավիճակի, հայկական հարցի և այլնի վերաբերյալ:

Սարոխանը, ինչպես և Շ. Առաքելյանը լինելով սահմանադրական շարժման ջերմ պաշտպաններ, հանդես են եկել սահմանադրական կարգերի պաշտպանությամբ: Նրանց կարծիքով ազգային սահմանադրությունը նոր ու դրական երևույթ էր հայ ժողովրդի արևմտյան հատվածի կյանքում:

Համարձուր Առաքելյանը լինելով սահմանադրական դեմոկրատական կուսակցության շահերի արտահայտիչը, իր ամսագրում միաժամանակ քննադատաբար է անդրադարձել ռուսական սահմանադրությանը, համարելով այն լույս դիմակ, որը կորցրել էր իր ուժը բյուրոկրատական գերիշխանությունում:

Ամսագրում առանձին ուշադրության են արժանացել ինչպես արևմտահայ կյանքը, այնպես էլ հայկական դատի պաշտպան հայ, ռուս և արևմտաեվրոպական գրողները, հրապարակախոսները, ժողովրդական գործիչները: Առանձնապես բարձր է գնահատվել Ֆրանսիացի բանաստեղծ, խմբագիր, հասարակական գործիչ Պիեռ Զիեստը: Նրա մահվան առթիվ ամսագրում տպագրված հողվածում (հեղինակ Շ. Առաքելյան) ընդգծված է այն հանգամանքը, որ մեծ գործիչը Սասունի ջարդերի ժամանակ լինելով Կ. Պոլսում, անարգանքի խոսքեր է ասել սուլթան Համիդի հասցեին: Նա Ֆրանսիական թերթերում տպագրել է հողվածներ, դատապարտել ջարդարարին, նրա վարած ազգահալած քաղաքականությունը: Թուրքական կառավարությունը համարել է նրան «հայ խոտվարար» և կալանավորել: Ապա հայկական դատի պաշտպանության նպատակով մոտ տասը տարի (1899—1908 թթ.) նա Փարիզում հրատարակել է «Pro Armenia» թերթը, որին թղթակցել են Շ. Առաքելյանը, Ա. Չոպանյանը, Ա. Ահարոնյանը, դոկտոր Շ. Լորիս-Մելիքյանը:

Համարձուր Առաքելյանը լինելով խաղաղասիրական շարժման ակտիվ գործիչներից մեկը, իր ամսագրում էջեր է տրամադրել աշխարհում սկսված խաղաղասիրական շարժման

հարցերի լուսաբանմանը: Ուշագրավ է նա «Խաղաղասիրական շարժումն երկրագնդի վրա» հոդվածաշարը (1910, № 2, № 8—10): Այստեղ ներկայացված է արևմտաեվրոպական զարգացած երկրներում կազմակերպված խաղաղասիրական ընկերությունների խոշոր դերը պատերազմների կանխման գործում: «Պատերազմը,— գրել է նա,— բացի մարդկային սուկայի վշտից, ամուսինների, եղբայրների, զավակների, երիտասարդ ուժերի կորստից, ունի և այլ աղետալի հետևանքներ. նա ստեղծում է ոչ միայն այրիներ, որբեր, ոչ միայն դժբախտներ, այլև ֆիզիկապես ու բարոյապես անպետք դարձած մարդիկ» (№ 4, էջ 60):

Ամսագրում շարունակաբար տպագրվել են 1889 թ. հունիսի 23-ին Փարիզում բացված Խաղաղության առաջին կոնգրեսի և հաջորդ կոնգրեսների որոշումները, վճիռները, օրենսդրական ակտերը, ինչպես նաև հայկական կոտորածներից և Կրետեի ապստամբությունից հետո Բուդապեշտում կայացած խաղաղության միջազգային կոնգրեսի նյութերը: Միաժամանակ տպագրվել են այդ կոնգրեսի միջազգային իրավունքի ծրագրի բոլոր հոդվածները:

Պետք է նշել, որ խաղաղասիրական շարժման գաղափարները բավարար չափով պրոպագանդվել են ժամանակի նաև հայ այլ պարբերականներում («Մշակ», «Մուրճ», «Տարագ», «Սուրհանդակ», «Գեղարվեստ» և այլն): «Արոր» ամսագրում աշխատանք է տարվել ոչ միայն այդ շարժման գաղափարները տարածելու և պրոպագանդելու ուղղությամբ, այլ նաև գործնական միջոցներ են մշակվել խաղաղասիրական շարժումը հայ իրականությունում կազմակերպելու, ընկերություններ ստեղծելու համար: Ինքը՝ խմբագիրը, առաջին քայլերն է արել այդ ուղղությամբ: Նա Թեհրանում ստեղծել է «Պարսկահայերի խաղաղության և իրավարարության ընկերությունը», որը առաջին խաղաղասիրական հայկական ընկերությունն է: Խաղաղասիրական շարժման հիմնական նպատակն էր՝ համոզել աշխարհին, որ միջպետական դատարանով պետք է վերջ սալ ազգերի միջև եղած վեճը:

Որպես խաղաղասիրական շարժման ակտիվ գործչի Համբարձում Առաքելյանին նախել են արևմտաեվրոպական զարգացած երկրներում: Հոռմի համալսարանում բացված խաղաղասիրական առաջին ցուցահանդեսի Հայաստանին նվիրված բաժնում ցուցադրվել է Հ. Առաքելյանի լուսանկարը մակագրությամբ. «Իմ ազգը, հայոց ազգը ունեցել է միշտ խաղաղասեր ոգի: Եվ նա այդ խաղաղասեր ոգում է պարտական իր երեք հազարամյա պատմական գոյությանը» (1911, № 10—11, էջ 91):

«Արոր» ամսագիրը անտարբեր չի մնացել ժամանակի ազգային քաղաքական կուսակցությունների գործունեության հանդեպ: «Հայկական կյանք» խորագրի տակ տպագրված հոդվածների հիմնական թեման կուսակցական պայքարն էր: Ցույց են տրվել ազգային տարբեր կուսակցությունների (դաշնակցություն, հին և նոր ընկերավարականներ, Թիֆլիսում, Երևանում գործող հասարակական կազմակերպությունները և այլն) միջև եղած պայքարի վնասաբեր հետևանքները, հետևանքներ, որոնք ավելի էին վատացնում առանց այն կ հոգաբերով լի ժողովրդի առօրյա կյանքը:

Ինչպես «Հայկական կյանք», այնպես էլ «Ռուսահայ կյանք», «Թուրքահայ կյանք» խորագրերի տակ տպագրվել են հոդվածներ կաթողիկոսական ընտրությունների, եկեղեցու դերի, եկեղեցական-ծիսական ուսումնարանների ծրագրերի, կանոնադրությունների, կաթողիկոսական դիվանի, Սինդոի, կոնսիստորիաների վերակազմման և այլնի մասին:

Ամսագրում քննարկվել են նաև հայ ժողովրդի հին, միջին և նոր դարերի պատմության ու իրավագիտության հարցեր: Նման հարցերի շուրջ հոդվածներ են տպագրել Խ. Սամվելյանը («Հայ եկեղեցական-պետական հարաբերությունները Հին Հայաստանում» (1910, № 4, № 6—7), Հ. Առաքելյանը («Հավելված պատմություն հայոց կամ Հայաստան» (1910, № 2) և ուրիշներ: Այս աշխատություններում պատմական դեպքերի շարադրանքի հետ մեկտեղ անց է կացվել այն միտքը, թե Ծ-րդ դարից սկսած հայերը ենթարկվել են ասպատակությունների, սրածությունների, կոտորածների և միայն մի քիչ շունչ քաշեցին «երբ ոռուները տիրապետեցին Հայաստանի մի մասին» (1912, № 3—4, էջ 41):

Ամսագրում բաց չեն թողնվել նաև լեզվաբանության հարցերը: Ստ. Մալխասյանի «Մի հնչյուն մի գիր» (1910, № 1, էջ 94—112), Ա. Նազարեթյանի «Ի՞նչ է ուղղագրությունը» № 5) և այլ հոդվածներում պաշտպանել է այդ տարիներին գործածության մեջ մտած վ-ի ուղղագրությունը, ընդունվել է մի հնչյուն, մի գիր սկզբունքը: «Արորը», ինչպես և «Մշակ», «Աղբյուր», «Տարագ» և այլ պարբերականներ օգտագործել են այդ ուղղագրությունը: Հետագայում հաղթել ու իր ճանապարհն է հարթել ուղղագրության այդ սկզբունքը: Այնպես որ «Արորի» նկատմամբ այս հարցի կապակցությամբ Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամների ունեցած քննադատական դիրքորոշումը անտեղի է եղել: Ի պատասխան նրանց «Արորը» գրել է. «Մեր ժամանակի հրամայական պահանջն է՝ կուլտուրան ժողովրդականացնել, դարձնել այն ամեն մեկի սեփականությունը: Իսկ կուլտուրայի նվաճման համար անընկճելի և միակ գեները՝ գիտությունը և ուսումը ձեռք են բերվում միայն գրագիտությամբ: Որչափ գրագիտության ուսուցումը հեշտանա, այնչափ էլ արագորեն կտարածվի նա և գրագետների թիվը օրեցօր կստվարանա» (№ 5, էջ 105):

«Արոր» ամսագիրը լինելով գիտական պարբերական, հետևել է նաև բնական գիտությունների բնագավառում ձեռք բերված նվաճումներին: Գյուղի բարեփոխման հարցերը կապվել են հողի մշակման ձևերի կատարելագործման, գյուղատնտեսության զարգացման հետ: Բննարկվել են նաև գյուղում տնտեսության կազմակերպման համար նոր ընկերությունների ստեղծման հարցերը: Կարևոր դեր է նշանակություն է տրվել հատկապես զենաստվոներին: Այս և նման հարցերի շուրջ ամսագրում հանդես է եկել հրապարակախոս, խմբագիր, մասնագիտությամբ գյուղատնտես Աշոտ Աթանասյանը: «Զենաստվոների գյուղատնտեսական գործունեությունը» հոդվածում (№ 1, էջ 128—140) նա բարձր է գնահատել Ռուսաստանում գործող զենաստվոների դերը, գրելով. «... շնորհիվ դրանց գրեթե ամեն նահանգում քացվել են գյուղատնտեսական ընկերություններ, որոնք ստանալով զենաստվոներից նյութական նպաստներ, լայն կերպով օգնում են տարածելու ժողովրդի մեջ գյուղատնտեսական կատարելագործությունները, նրա ամեն մի ճյուղում» (1910, № 1, էջ 140):

Հողվածներ են տպագրվել նաև կենդանական աշխարհի ծագման, առողջապահության, ժողովրդական բժշկության, Դարվիճի տեսության, օդազնացության, տեխնիկայի քննազատում եղած նորությունների և այլնի մասին: Միաժամանակ նշվել է նորագույն գյուտերի կարևորությունը գիտության ու տեխնիկայի զարգացման գործում: Ամսագիրը հանգել է այն եզրակացության, որ տարիների ընթացքում համաչափ չեն զարգացել տեխնիկան ու մարդկային հոգեբանությունը: Մարդկային էության մեջ բուն դրած «չար հակումների» հետևանքով տեխնիկան հաճախ չի ծառայել իր նպատակին: Իսկ եթե մարդը նույնպես զարգանար, կատարելագործվեր ինչպես տեխնիկան, ապա հասարակությունը կապրեր դժբախտալից կյանքով:

Ամսագիրը բարոյախրատական նպատակներով պրոպագանդել է Աստծո պատվիրանները, Քրիստոսի պատգամները, աշխարհի իմաստուն մարդկանց մտքերը: Կոնֆուցիոսի կյանքն ու ուսմունքը մեկնաբանող հոդվածը (№ 11, էջ 79—98) հայ ընթերցողին ծանոթացրել է չին մեծ իմաստունի բարոյախրատական քարոզներին, որոնց համամայն մարդը, որ ապրում է սիրով, կարող է շտկել մարդկանց փոխհարաբերությունները, կարող է հաստատել բարոյականության ու աշխարհաշինության ճշմարիտ օրենքները:

Խաղաղասիրական գաղափարների տարածման առաքելությամբ հանդես եկած «Արոր» ամսագիրը ժամանակին կատարել է կարևոր դեր նաև հայ մշակույթի տարբեր ճյուղերի պրոպագանդման գործում, գրավելով իր յուրովի տեղը հայ հասարակական մտքի և մամուլի պատմության մեջ:

С. С. НАЗАРЯН — Научно-исторический журнал «Арор». — К ряду популярных просветительских и научных периодических изданий начала 20-го века относится журнал «Арор», издаваемый публицистом, писателем, активным деятелем миротворческого движения Амбарцумом Аракеляном. На протяжении трех лет (1910—1912) своего существования журнал сыграл видную роль как во всех областях армянской культуры, так и в распространении и пропаганде миротворческих идей. По значимости и важности поднимаемых вопросов «Арор» занял прочное место в истории армянской общественной мысли и печати.